600.0006.20.01.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունվարի 2021 թվականի №6Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ 42-ՐԴ և 50-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿԻՆ ԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ քաղաքացի Մարիամ Անտոնյանը (այսուհետ՝ Դիմող անձ) 2020 թվականի դեկտեմբերի 1-ին դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն՝ (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 42-րդ և 50-րդ փողոցների խաչմերուկին կից տարածքում տեղադրվող պոմպակայանի սպառման համակարգը (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին միացնելու խնդրանքով,

բ) որ Սպառման համակարգի միացումն Ընկերության էլեկտրական ցանցին իրականացվում է համաձայն Դիմող անձի դիմումի՝ որպես առանձին սպառման համակարգ, և լրացուցիչ ծախսեր չի առաջացնում,

գ) որ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից տրամադրված 2020 թվականի դեկտեմբերի 9-ի №01/01/1819-20 տեղեկանքի համաձայն՝ նշյալ հասցեում պոմպակայանի տեղադրման վերաբերյալ վերջինս առարկություն չունի,

դ) Ընկերության սույն թվականի հունվարի 12-ի №ԴԳ037 և Դիմող անձի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս առարկություն չունեն Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելու վերաբերյալ,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ

հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 14.4-րդ կետով սահմանված կարգով տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից տրամադրված 2020 թվականի դեկտեմբերի 9-ի №01/01/1819-20 տեղեկանքը:

2. Չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱԴՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
20 հունվարի 2021թ.